



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՅԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Diocese of the Armenian Church of America

TELEPHONE:
LEXINGTON 2-5790

630 SECOND AVENUE
NEW YORK 16, N. Y.

Թիւ 11092
Փետրուար 27, 1964

Արժանաշնորհ
Տ. Կիւրեղ ԲՆՆՅ. Գալուստեան
Հոգեւոր Հովիւ Ս. արութիւն Եկեղեցւոյ
Ս. Միլվոքի.

Սիրելի Տէր Հայր,

Թղթակցութեան համար գործածելի Առաջնորդ Սրբազանի նկարէն օրինակներ պիտի ղրկուին Ձեզի կարելի փութով: Կենթադրենք թէ այդ նկարները դուք իրապէս պիտի գործածէք Ձեր տեղական թերթերու թրդ-թակիցներուն:

Եթէ Փռպլիսիթի համար ջանքեր պիտի ըլլան Ձեր կողմէ, թե-լադրելի է որ Առաջնորդարանի Յարաբերութեանց Դիւանի վարիչ Պրն. Պետրոս Նորհատի եւ մեր Դիւանի հետ գործակցաբար ընթացք տրուին այդ ուղղութեամբ եղած ծրագիրներուն:

Գալով Ձեր ծխական խորհուրդի նորընտիր անդամներու վաւե-րացումէն յապաւուած երկու անուններուն, պէտք կը զգանք աւելցնել թէ Ձեր տեղեկագրին մէջ մէջ տուած էք եթէր անուններ, իսկ անոր կցորդ Ձեր նամակին մէջ ութը անուններու դիմաց գրուած է թէ ըն-տըրուած են 1964ին:

Տասընեւմէկ անդամներէ բաղկացեալ ծխական խորհուրդի մը մասնակի ընտրութեան պարագային վեց կամ հին դադարեալներու համար նոր ընտրութիւն կը կատարուի: Այլապէս եթէ մէկ կամ երեւո հրա-ժարեալներու տեղը լեցնելու համար անհրաժեշտ է առաքել մէկ կամ երկու հոգիի եւս ընտրութիւն կատարել, այն ժամանակ պէտք տեղե-կաքրին մէջ ըսել թէ այդ մէկ կամ երկու անձերը ընտրուած են մէկ տարուան պաշտօնավարութեան համար:

Ուրեմն Առաջնորդ Սրբազանի կողմէ կատարուած վաւերացու-մին մէջ մոռացում չկար: Թեւադրելի է որ նորին Սրբազնութեան ուղղուած նամակի մը մէջ տաք այն երկու ընտրեալներուն անուն-ները եւ ընտրութեան պարագաները, որպէսզի ընթացք տրուի Ձեր խնդրանքին:

Յուսալով թէ զՁեզ պիտի գտնենք քաջառողջ թեմական Պատգմ-ժողովին առթիւ,

Մնամ սիրով եւ յարգանքով

Սուրբ Մանուէլեան
Դիւանապետ